

Յոբելինական Շքեղ Հանդիսություն Նուիրում՝ Երուսաղեմի Սրբոց Թարգմանչաց Վարժարանի Հիմնադրութեան Պանծալի 70-ամեակին

Նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ Հիւսիսային Ամերիկայի Սրբոց Թարգմանչաց Վարժարանի Սանուց Միութեան Վարչութեան, 70-ամեակի Յոբելինական Խրախճանք-Հանդիսությունը փեղի ունեցաւ՝ Շաբաթ, 16 Նոյեմբեր, 1999-ին, երեկոյեան ժամը 8-էն սկսեալ, Լոս անճելըսի Ս. Յակոբ Նայաստանայց Առաքելական եկեղեցւոյ «Կոկեան» սրահին մէջ, արժանաւայել շուրով ու մրերմիկ մթնոլորտի մէջ:

Ձեռնարկը կը վայելէր Երուսաղեմի Նայոց Պատրիարք՝ Նորին Ամենապապութեան Ս. Թորգոմ Ս. Արք. Մանուկեանի Բարձր Նովանաորութիւնը:

Աւելի քան 350 հաւաքաւոր սան-սանուհիներ, երեք ու երկրասարդ սերունդի ներկայացուցիչներ ու բարեկամներ, արդար հպարտութեամբ, յուզիչ ու անմոռանալի պահեր ապրեցան, միաժամանակ վերյիշելով նաեւ իրենց մանկութեան ու պատանեկութեան երանելի օրերը, որ վայելեցին Թարգմանչացի հայակերպ ու կրօնաբոյր միջավայրին մէջ:

Հանդիսութեան առաւել փայլք փոխին՝ մեր ծննդավայր Երուսաղեմէն, հեռաւոր Անգլիայէն, Քանապայէն, ինչպէս նաեւ Նիւ Եորքէն, Նիւ Ճըրզիէն, Շիքակոյէն, Օրէկոնէն, Տիքոնոյէն, Արիզոնայէն, եւ Գալիֆօրնիոյ հեռաւոր շրջաններէն՝ Ֆրէզկոյէն, Սան Ֆրանսիսքոյէն, Սանտիէկոյէն, Սանթա Պարպարայէն, Սան Լուի Օսիսքոյէն ու այլ հեռաւոր հայ գաղութներէն ժամանած սան-սանուհիներ, որոնք եկած էին վերանորոգելու իրենց խորին յարգանքն ու սէրը՝ Նայ լեզուի, Նայոց Պատրութեան, մշակոյթի ու ազգային աւանդութեանց «Լուսոյ Վառարան» ու «Նաւարքի ամրոց» Սրբոց Թարգմանչաց Վարժարանին:

Այս առթիւ շքեղօրէն զարդարուած սրահին բեմին խորքը՝ զեպեղուած էր Թարգմանչացի հսկայ յուղաներկ պաստառը:

Օրուան հանդիսավար՝ գաղութիս ծանօթ մրաւորականներէն, «Արմինիըն Օպերովը» թերթի խմբագիր, ու հանրային գործիչ, Պրն. Օշին Քէշիշեանի հրաւերով, Արժ. Ս. Արշակ Քինյ. Խաչապուրեան՝ Ամերիկայի ու Նայաստանի պետական մաղթերգներով պաշտօնական բացումը կատարեց Յոբելինական հանդիսութեան:

Ամենապապիւ Թորգոմ Պատրիարք Նոր Օրինութեան Պատգամը փոխանցեց՝ Արժ. Ս. Միփան Քինյ. Մխսեան:

Ապա ողջոյնի եւ բարի գալուստի խօսքին համար, օրուայ հանդիսավարը բեմ հրաւիրեց Միութեանս ժրաջան Արեւնապետուհի Օր. Ազնիւ Եագուպեանին:

Օր. Եագուպեան անդրադառնալով միութեանս ծրագիրներուն, իր կարգին խորին շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն, որոնք միշտ սապար հանդիսացած են միութեանս գործունէութեան իրենց բարոյական եւ նիւթական օժանդակութեամբ:

Գեղարուեստական բաժինով ելոյթ ունեցաւ ծանօթ ասմունքող Պրն. Գրիգոր Քէլէեան, որ խոր ապրումով ասմունքեց Սիամանթոյի՝ Ս. Մեսրոպին նուիրուած երկու քերթումները:

Այս հանդիսավար Օշին Քեշիշեան բեմ հրափրեց Միութեանս հիմնադիր վարչական անդամ, ծանօթ հրապարակագիր եւ հեղինակ Նահապետ Մելքոնեանը օրուան խօսքը փոխանցելու համար:

Պր. Մելքոնեան իր խօսքին մէջ անդրադարձաւ օրուայ երկու խորհուրդներուն՝ Սրբոց Թարգմանչաց Վարժարանի հիմնադրութեան 70-ամեակին եւ Սանուց Միութեան 10-ամեակին մասին:

Ան իր խօսքին մէջ շեշտեց թէ «Թարգմանչացը լոկ կառոյց մը չէ...», ան «աղբիւրն է լուսոյ» Նայ Երուսաղէմին: Այսօր շուրջ 130 ուսման ծարափ աշակերտներ՝ նոր գարուններ կան անոր ջերմ յարկերէն ներս: Դժուարութիւններ..., խոչընդոտներ... միշտ եղած են ու պիտի ըլլան, սակայն էականը եւ կենսականը այն է, որ մենք Թարգմանչացականներս չմոռնանք Ս. Յակոբայ դարաւոր եւ պարմական սրբազան այս հաստատութիւնը, չմոռնանք մեր սիրելի վարժարանը, բարոյապէս եւ նիւթապէս զօրավիգ կանգնինք մեր ազգային այս հարստութեան: 70-ամեակը ոսկի առիթը կրնձայէ մեզ մեր երախտագիտական ջերմ զգացումները յայտնելու մեր կրթական օճախին, զայն հովանաւորող միաբանութեան եւ կրթական մշակներուն»:

Այս, յանուն Սանուց Միութեան, Պր. Մելքոնեան, յարգանքի եւ երախտագիտական զգացումները յայտնեց Երուսաղէմի զինուորագրեալ միաբանութեան եւ Ս. Աթոռոյ գահակալ Նորին Ամենապատուութիւն Տ. Թորգոմ Ս. Արք Մանուկեանին, որուն Նայրական բարձր հովանաւորութեան փակ, Թարգմանչացը կը շարունակէ իր Յաղթական Երթը, իսկ Սանուց Միութիւնը կը վայելէ Ամեն. Պարրիարք Նոր Նայրական գուրգուրանքը եւ քաջաւերանքը:

Իւրայայտուկ մարերմութեամբ, հանդիսավար Օշին Քեշիշեան ներկայացուց պարտոյ հիւրերէն, Գալիֆորնիոյ Ծերակոյտի անդամ Սքաթ Ուայլըմընը, որ California State Assembly-ի կողմէ, Թարգմանչացին ուղղուած յարուկ գնահատագիր մը յանձնեց Նահապետ Մելքոնեանին, իսկ գոնկրեսմէն Պարայի գնահատագիրը՝ Ազնի Եագուպեանին:

Այս հանդիսավարը ընթերցեց ու վարչութեան անդամներուն յանձնեց, նախապէս սրացուած Ամերիկայի Մենըթէն, Գոնկրեսէն, Պետական, Նահանգային ու քաղաքական բարձրաստիճան անձնաւորութիւններու շնորհատրական ու գնահատական գիրերը:

Նշենք նաեւ որ այս առթիւ հրապարակուած էր 70-ամեակի յարուկ Յուշամատեան մը: Գնահատագիրներ ուղղած էին նաեւ Նայաստանի Արարքին Գործոց Նախարարութիւնը, Նայաստանի, Յորդանանի, Իսրայէլի հիւպատոսութիւնները, հոգեւոր առաջնորդներ, քաղաքական դէմքեր եւ ազգային միութիւններ, որոնց գիրերը լոյս տեսան Յուշամատեանին մէջ:

Ընդհանուր խանդավառութեան մէջ հանդիսավարը Սանուցի վարչական անդամներուն յանձնեց նաեւ Յուլիս 14, 1999-ին, U.S. Congress-ի Capitol-ի շէնքին վրայ ծածանած Ամերիկայի պետական Դոշը, յարուկ վաւերագրով եւ գնահատագիրով, որ շուրտով իր պարտոյ տեղը պիտի գրաւէ Երուսաղէմի Նայոց դարաւոր Պարրիարքութեան՝ «Մարքիկեան» թանգարանին մէջ: Բոլոր սարացուած Գնահատագիրները եւ Յուշանուէրները յառաջիկայ Մեպրեմբեր ամսուն պիտի յանձնուին Ամեն. Պարրիարք Նոր, դէպի Երուսաղէմ Սանուցի կազմակերպած ուխտագնացութեան առթիւ:

Ապա, Թարգմանչացի սան Պր. Կարօ Թիթինճեան, գնահատելով Օր. Ազնիւ Եագուպեանի փարիներու նուիրումը Երուսաղէմէն մինչեւ Լոս Անճելըս, ոսկեայ յուշամեփալ մը նուիրեց անոր:

Հանդիսութեան պաշտօնական յայտագրէն ետք, Թարգմանչացի սան՝ սիրուած երգիչ Դաիթ Սամուէեանի ղեկավարած՝ Memories նուագախումբի խանդավառ պարեղանակներու կշռոյթով, պարահարթակը շուրջով լեցուեցաւ երիտասարդ ու երէց գոյգերով: Հայկական մենապարն ու շուրջապարը, երոտպական ու լաւին ամերիկեան ծանօթ պարերն ու երգերը իրար յաջորդեցին, խանդավառութիւն ու վայելք պատճառելով նաեւ ներկայ հասարակութեան:

Այս ընդհանուր խանդավառութեան մէջ, Նահապետ Մելքոնեան մերթ ընդ մերթ բեմէն կը յայտարարէր Սանուց Միութեան կապարուած սրտաբոխ նուիրալուծութիւնները: Հանդիսութեան մաս կը կազմէին նաեւ՝ մոմավառութիւն եւ վիճակահանութիւն, որ ձեռնհասօրէն վառեցին Պր. Հերի Մէնէշեան եւ Տիկ. Միրվարդ Պաղամեան: Նշենք նաեւ, որ վարչական անդամներ, Տիարք Պերճ Պաղպոյեան, Պօղոս Աբրահամեան եւ Կարօ Պաղամեան որպէս հիւրընկալներ, ամէն ջանք ի գործ դրին ձեռնարկի յաջող ընթացքին համար:

Յօրելիական սոյն ձեռնարկը, անկասկած, աննախընթաց ու հոգեկան մեծ ու անմոռանալի վայելք պարգեւեց ներկայ Սաղիմահայութեան:

Դիւան՝
ՍԹՎ Հրահային Ամերիկայի
Սանուց Միութեան